


ՀՌԻՓՍԻՄԵ ՊՈՂՈՍՅԱՆ

# Մարգարեաձառկի

ՅԵՎ

## ԼՈՒՍԱՏԻՏԻԿԻ

ՀԵՐՅԱԹԸ



ՊԵՏՅՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊՍԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1937



A.P.M.  
3-756a

ՀՈՒՓՄԻՍԵ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱՐԳԱՐՏԱԾԱՂԿԻ ՅԵՎ  
ԼՈՒՍԱՏԻՏԻԿԻ ՅԵՔՅԱԹ

Սյնտեղ հեռու, մարդազետնում:  
Ուր արեվն է դարնան փայլում,  
Ուր վոք գետի ջրին արծաթ  
Ջինջ լեռկինքն է նայում անթարթ,  
Ուր սոճին է կանաչազարդ  
Յեվ մասրենին խիտ փշապատ,  
Վորքան ծաղիկ այս գարունքին  
Հասակ առան իրար կողքի:




3228

A 35622










Յերիցուկն ասողաձեկ,  
Յերեքնուկը լերեք թեկ,  
Կանաչներում տարուբեր.  
Մեղմ որորվող կակաչներ:  
Անմոռացուկ լերկնագուշն,  
Վոր հասկերում վոսկեզուշն  
Որորվում ե թազնված,  
Կապույտ շորերը հագած,  
Ծաղկանց միջին անհամար,  
Ծլեց ծաղիկ անթառած:





A detailed illustration of various insects. In the top left, a large brown and orange beetle is shown on a green leaf. To its right, several flies of different sizes are depicted. In the center, a large yellow and black butterfly is prominent. Below it, another butterfly with orange and black wings is shown. In the bottom left, a green butterfly is visible. At the bottom center, a dragonfly is illustrated. The background is a light green wash.

Մի ծաղիկ՝


• Հրաշալիք,

Ինչպես ձյունի մի փաթիլ,  
Բոլորի մեջ մի հատիկ,

Գլխին փափուկ մի գլխարկ,  
Վտան ել լերկար ու բարակ,  
Մարգագեանում աջն կանաչ  
Միայն քամուն եր ճանաչ:








Քամին անցավ լալն դաշտերով,  
Ու մի խխունջ տեսավ շուտով,  
Վոր տնակն իր շալտիած,  
Դանդաղ սողոգւմ եր դեպի ցած:  
Քամին պատմեց ծաղկի մասին  
Դանդաղաշարժ այդ խխունջին:  
Սա լել լուրը որվա կեսին  
Տարավ, հասցրեց սեւ բզեզին:  
Իսկ բզեզն եւ իրեն հերթին  
Վողջը պատմեց միջատներին,  
Ճպուռներին ու ճանճերին,  
Մոծակներին, թիթեռներին,  
— Թե ծաղկանց մեջ անհամար՝  
Բացվեց ծաղիկ անթառամ:  
Մի ծաղիկ՝  
Հրաշալիք,  
Ինչպես ձյունի մի փաթիլ,  
Բոլորի մեջ մի հատիկ.  
Գլխին փափուկ մի դլխարկ,  
Վտոն եւ լերկար ու բարակ:





Անս սաղափ թեվերը բաց,  
Այգ նոր ծաղկի մոտ հավաքված,  
Ճպուռների անհող մի խումբ  
Ցերգ և ասում, հետն ել խաղում:  
Թիթեռները գույգ թեվերով  
Մեղմ փարվում են ծաղկի վզով:  
Ծղրիղների ամբողջ մի գունդ  
Թռչկոտում և այտեղ անփութի:  
Գարնանաչին լուսաբացին  
Միջատներն են չեկել այցի:  
Ճերմակ ծաղկին նրանք սիրով  
Վողջուռնում են ամբողջ խմբով:




Ամեն մեկը՝ նրան դիմում,  
Հետո՞ ել ալսպես անուշ խոսում,  
— Դու ծաղիկ՝  
Հրաշալիք,  
Ինչպես ձյունի մի փաթիլ,  
Բոլորի մեջ մի հատիկ,  
Գլխիդ փափուկ մի գլխարկ,  
Վտադ ել լերկար ու բարակ:  
Դու ճոխ զարդն ես մարգերի,  
Դե, ինձ սիրի, դե, սիրի:  
Ձե, լես լավ եմ բոլորից,  
Նախշուն, սիրուն ամենքից:  
Իրենց գովում են ալսպես  
Միջատները անյերես:  
Մեկը մյուսին բամբասում,  
Վատարանում ե, խոսում:  
Իսկ ծաղիկը նրանց համար  
Մի պատասխան ունեք հարմար:





— Անկոչ հյուրեր, զուր եք խոսում,  
Յես արեվի լույսն եմ սիրում:  
Յեվ ձգվում ե վողջ հասակով,  
Արեվին նայում սիրով,  
Վառ շողերին վարվում ուժգին,  
Շիկնում, թեքվում դեպի գեաին:  
Յերբ մարգերի վրա անծայր  
Մութ գիշերն եր իջնում կամաց,  
Անթառամն եր այն ժամ տխրում,  
Աչիկները ցողոտ թարթում:  
Ապա դիմում իր հյուրերին,  
Այն պարծենկոտ միջատներին:  
— Ո՞վ կարող ե գիշերը սեվ  
Լուսավորել լույսով թեթեվ,  
Ո՞վ կհաղթի այս խավարին  
Նա կլինի իմ սիրելին:



\*\*\*


Միջատները լերը լսեցին,  
Սպիտակ ծաղիկն մենակ թողին,  
Խիստ պարծենկոտ բզզոցներով,  
Ջոկ-ջոկ ամբողջ խմբով,  
Թռան արագ, թռան թեթեւ,  
Գետի այն կողմ, սարի լեռ  
Դեպի գլուղեր, դեպի քաղաք,  
Վոր շուտ գտնեն անմար կրակ:

\*\*\*

Հեռուներում, մարգագետնում  
Ուր ծաղիկն ե հեղ որորվում  
Մի ծաղիկ՝  
Հրաշալիք,  
Մութ գիշերվա ուշ պահին  
Այցի լեկավ այս ծաղիկին  
Լուսատիտիկն անճանաչ,  
Պոչին կրակ վառ-կանաչ:



Դա մի հյուր եր շատ համեստ,  
 Չճառող ու միշտ պարկեշտ,  
 Վոր բերել եր լույս ու փայլ,  
 Քշել խավարը մուսլ:  
 Յեվ ծաղիկը զարմացած  
 Բացեց աչքերը ցողաթաց,  
 Ուր սիրեց նա հեղ հյուրին,  
 Կանաչափայլ միջատին:  
*Մտերմացան այդ սրից:*  
 Մ'ըտ անբաժան իրարից,  
 Նրանք ուրախ ապրեցին  
 Յեվ խավարը ցրեցին:  
 Նրանց շուրջը լույս ու փայլ,  
 Չկար գիշերը մուսլ:



Այն խխուհն էլ անդոր  
 Զարմանում եր շատ իզուր,  
 Թե ինչպես մի լուռ միջատ,  
 Ցերեկները՝ գորշ, անհայտ,  
 Գիշերներն եր միշտ վառվում  
 Ու գմբուխտի պես փայլում:  
 Միջատները ճամբին վուրբ,  
 Գիշերներով հոգնած, մուրբ,  
 Շատ փնտրեցին մի լույս անմար,  
 Այն սիրունիկ ծաղկի համար:  
 Հենց տեսնելին փայլող ճրագ,  
 Կամ մի ուրիշ վառվող կրակ,  
 Խիստ պարծենկոտ բզզոցներով,  
 Զոկ-շոկ և ամբողջ խմբով,  
 Հասնում էին, վրան թռչում,  
 Անփուլթ, անզուշ իրար հրում  
 Յեւ թե վերով լույսը մարում  
 Նորից մնում գորշ խավարում:  
 Իսկ այն կանաչ մարգագետնում,  
 Ուր ծաղկում է ու փթթում  
 Մի ծաղիկ՝  
 Հրաշալիք,  
 Ինչպես ճյուղի մի փաթիլ,  
 Բուրբի մեջ մի հատիկ.  
 Գլխին փափուկ մի գլխարկ,  
 Վոտն էլ չերկար ու բարակ,  
 Ուներ ընկեր մի համեստ,  
 Զճառող ու միշտ պարկեշտ,  
 Լուսատիաիկ անուշով,  
 Վոր սեփական իր լույսով,  
 Շուրջը խավարն է ցրում,  
 Պարծառ մի լույս տարածում:

A <sup>II</sup> 35622



A 1038  
 Հ. 10  
 Կ. 10



~~XXXXXXXXXXXXXXXXXXXX~~  
Տեխ. խմբագրեր՝ Աս. Այրումյան  
Մրբագրիչ՝ Ա. Գասպարյան

ԳԱՍ Հիմնադրար Գիտ. Գրատ.

Հրատ. № 4150 Գլավխիտի լիազոր Կ—9248 Պատվեր 920 Տի

Պետհրատի Տպարան Յերևան, Լենինի փող. №



220035622

03 [05K]

ԳԻՆԸ 1 Ռ.

521

A II  
35622

Տ Կ Վ Կ Վ  
Օ Ր օ մ ա ղ և օ Տ վ ե ղ յ օ  
Դ ի Վ Ա ռ մ. Ս Տ Ր. Ե Ր օ Վ յ, 1937